# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**«ԲՀԴ- ԳՀԱՇՁԲ-21/1 » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Ք. Հրազդան 08 հուլիսի 2020թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ Ն. Պողոսյան

Վ. Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյան

**1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>**

**(Ա. Հարությունյան )**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
3. Ընթացակարգի գնային առաջարկների մասին
4. Անհամապատասխանությունների շտկման մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**<u>2.Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները բացման մասին</u>**

**(Ա. Հարությունյան )**

Մասնակիցների կողմից ծրարները կազմվել ու ներկայացվել են Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակիցների.

**1.Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ -ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթում**

✓ Առաջին չափաբաժնում մասնակցի՝ հավելված 2 /Գնային առաջարկ/-ում ներկայացրած գնային առաջարկը և առանձին ենթաբաժինների գումարը չի համընկնում: Մասնավորապես, մասնակցի ներկայացրած ծավալաթերթի առանձին ենթաբաժինների գումարը կազմում է 4700020 ՀՀ դրամ, իսկ մասնակցի գնային առաջարկում գրված է 4700000 ՀՀ դրամ: Առաջին չափաբաժնում /1-4 ենթաբաժինների համար/ շտկման ենթակա մյուս

անհամապատասխանությունը վերաբերում է տոկոսային կշիռներին: Մասնակիցի ներկայացրած ծավալաթերթում տոկոսային կշիռները նույնն են ինչ նշված է հրավերում: Սակայն մասնակցի ներկայացրած գներով կշիռները տարբերվում են հրավերում նշված կշիռներից: Օրինակ առաջին չափաբաժնի առաջին ենթաբաժնի կշիռը մասնակցի նշած գներով պետք է լինի 4.12 և այլն:

- ✓ Նույն խնդիրը վերաբերում է նաև երկրորդ չափաբաժնին: Մասնակցի՝ հավելված 2 /Գնային առաջարկ/-ում ներկայացրած գնային առաջարկը և առանձին ենթաբաժինների գումարը չի համընկնում: Մասնավորպես, մասնակցի ներկայացրած ծավալաթերթի առանձին ենթաբաժինների գումարը կազմում է 1460011 ՀՀ դրամ, իսկ մասնակցի գնային առաջարկում գրված է 1460000 ՀՀ դրամ: Տոկասային կշիռների մեջ շեղում նույնպես առկա է: Ի տարբերություն առաջին չափաբաժնի, որտեղ պարզապես առկա էր կշիռների թվաբանական սխալ և մասնակցի նշած կշիռը փաստացի չէր համապատասխանում ծավալաթերթում նշված **ենթաբաժնի գումարի և բոլոր ենթաբաժինների գումարի հարաբերությանը, ապա երկրորդ չափաբաժնի առաջին ենթաբաժնի կշիռը նույնիսկ չի տեղավորվում օրենքով թույլատրելի շեղման սահմաններում:Մասնացի ներկայացրած գներով այս ենթաբաժնի կշիռը պետք է լիներ 8.77: Իսկ մնացած չորս ենթաբաժիններում առկա է նույն՝ փաստացի չհամընկման խնդիրը: Օրինակ երկրորդ ենթաբաժնի կշիռը պետք է ստացվեր 34.21 և այլն:**

2. **Լիլիթ-92 ՍՊԸ -ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթում**
   - ✓ Առաջին հերթին մասնակիցը իր ծավալաթերթում գրել է հրավերում նշված կշիռները, ուստի առկա է կշիռների անհամապատասխանություն՝ փաստացի ներկայացրած թվերի հետ և շեղում թույլատրելի սահմաններից: Մասնավորապես, առաջին չափաբաժնի առաջին և չորրորդ ենթաբաժինների կշիռները, մասնակցի ներկայացրած գներով շեղվում են նույնիսկ թույլատրելի համարվող սահմաններից: Օրինակ առաջին ենթաբաժնի կշիռը ըստ մասնակցի ներկայացրած գների պետք է լիներ 5.42: Իսկ նույն չափաբաժնի երկրորդ և երրորդ ենթաբաժինները թեև գտնվում են թույլատրելի սահմաններում, այնուամենայնիվ չեն համապատասխանում մասնակցի ներկայացրած փաստացի գների հետ: Օրինակ երկրոդ ենթաբաժնի կշիռը պետք է լիներ 48.34 և այլն:
   - ✓ Երկրորդ չափաբաժնում առկա է տեխնիկական խնդիր: Ծավալաթերթի մի մասում չկան ընդհանուր գները, մի մասում չկան կշիռները, ուստի շեղված են նաև բոլոր կշիռները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

## <u>**3.Ընթացակարգի գնային առաջարկների մասին**</u>

**(Ա. Հարությունյան )**

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն՝

| Չ/հ | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|---|
| Չափաբաժին 1 | | | | | |
| 1 | *Ռոպան Շին Տեխնոլոջի ՍՊԸ* | **5 000 000** | - | **5 000 000** | **5 980 470** |
| **2** | *Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ* | **4 700 000** | - | **4 700 000** | |
| **3** | *Ավագ Շին 1 ՍՊԸ* | **3 998 000** | **799 600** | **4 797 600** | |
| **4** | *Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ* | **3 588 950** | **717 790** | **4 306 740** | |
| **5** | *Լիլիթ-92 ՍՊԸ* | **5 586 941** | - | **5 586 941** | |
| Չափաբաժին 2 | | | | | |
| **1** | *Ռոպան Շին Տեխնոլոջի ՍՊԸ* | **1 100 000** | - | **1 100 000** | **1 319 840** |
| **2** | *Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ* | **1 460 000** | - | **1 460 000** | |
| **3** | *Ավագ Շին 1 ՍՊԸ* | **1 099 866.67** | **219 973.33** | **1 319 840** | |
| **4** | *Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ* | **850 000** | **170 000** | **1 020 000** | |
| **5** | *Լիլիթ-92 ՍՊԸ* | **1 282 272** | - | **1 282 272** | |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

## <u>**4. Անհամապատասխանությունների շտկման մասին**</u>

**(Ա. Հարությունյան )**

ProTender©
www.protender.am

Հանձնաժողովը որոշեց ***Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ -ին, և Լիլիթ-92 ՍՊԸ -ին,*** ծանուցել անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով այն շտկել 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 09.07.2021թ ժամը 12:00-ն համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41 կետի:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

**(Ա. Հարությունյան )**

Գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել անհամապատասխանությունների շտկման օրը՝ 09.07.2021թ ժամը 12:00-ին, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, Սամվել Վարդանյան 2 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ Ն. Պողոսյան

Վ. Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար Է. Գրիգորյան